



ԳՎԱ 7.2. Աշխարհի բնակչության և երկրների ապահովվածությունը տարբեր տեսակի բնական ռեսուրսներով

1. Այժմ իրավիճակը կտրուկ փոխվել է, և մարդու ազդեցությունը բնության վրա այնքան է մեծացել, որ այն հանգեցրել է շրջակա միջավայրի վատթարացմանը: Երկրի բնական հարստությունները գնալով կրճատվում են, կրճատման տեմպերը՝ արագանում:

2. Արդյունավետ բնօգտագործումը ենթադրում է հասարակության և բնության, մարդու և շրջակա միջավայրի ներդաշնակ փոխներգործություն: Հասարակությունը բնության հետ իր փոխհարաբերությունները պետք է կառավարի այնպես, որ կանխի մարդու միջամտության անցանկալի հետևանքները:

Ոչ արդյունավետ բնօգտագործումը նշանակում է բնության նկատմամբ միակողմանի, սպառողական վերաբերմունք, նրանից որքան հնարավոր է շատ նյութական շահ «կորզելու» ձգտում՝ հոգ չտանելով նրա պահպանության, առավել ևս բարելավման մասին: Էապես տուժում է շրջակա միջավայրը, խախտվում է երկրահամակարգերի բնական հավասարակշռությունը:

3. Բնական ռեսուրսների արժեքավորումը դրամական արտահայտությամբ (գնի որոշումը) նրա **արժեքային գնահատումն** է: Օրինակ՝ պղնձի պաշարը 300 մլն տ է, հայտնի է 1 տ պղնձի արժեքը, այն, բազմապատկելով 300 մլն-ով, կստացվի նրա արժեքային գնահատումը: Նույն կերպ կարելի է գնահատել նաև ջրային պաշարները: Կա որոշակի քանակի ջրային պաշար, հայտնի է 1 խմ ջրի արժեքը, այն, բազմապատկելով ընդհանուր պաշարներով, կստանանք արժեքային գնահատումը:

Սակայն բնական ռեսուրսների մյուս տեսակների հարցում հնարավոր չէ կիրառել արժեքային գնահատումը: Նման պարագայում օգտվում ենք գնահատման բալային համակարգից, որը կիրառելի է բոլոր ռեսուրսների դեպքում: Գոյություն ունեն 5, 10, 100 բալային համակարգեր: Օրինակ՝ 5 բալային համակարգով պետք է գնահատենք տարածքի ռեկրեացիոն ներուժը (պոտենցիալը):

5 բալ – ռեկրեացիոն շատ բարձր ներուժ ունեցող,

- 4 բալ – ռեկրեացիոն բարձր ներուժ ունեցող,
- 3 բալ – ռեկրեացիոն միջին ներուժ ունեցող,
- 2 բալ – ռեկրեացիոն ցածր ներուժ ունեցող,
- 1 բալ – ռեկրեացիոն շատ ցածր ներուժ ունեցող: